

## Դ. Մեծահանդես թագաւոր-օծութիւն Լեւոնի, եւ Կարգ օրհնութեանս

Իսկ մեզ՝ դառնալով առ պատմութիւն, հարկ է համարել՝ թէ որպիսի ինչ եւ գործեցան՝ եղեւ յետ հրեշտակութեան Յովհաննու արքեպիսկոպոսի Ստյ 'ի Պտղոմայիս, եւ թէ եբեր սա ընդ իւր՝ 'ի դիմաց մեծի քարտուղարի կայսերն եւ նուիրակի Քահանայապետին՝ զեպիսկոպոս ոմն կամ զոմանս, որք կատարեցին զպատգամաւորութիւն իւրեանց. խօսեցան, վիճեցան, հաւանեցան, երդուան եւ կնքեցին զպայմանսն յելս 1197 կամ 'ի սկիզբն 1198 ամի. եւ այնուհետեւ չմնայր ինչ այլ, բայց պատրաստել զհանդերձանսն եւ թագաւորեցուցանել զԼեւոն: Սակայն եւ առ այս, (քանզի մեծահանդես կամէր զայն առնել, որպէս եւ արժանն պահանջէր, եւ հրաւիրել զբազումս նաեւ 'ի հեռաւոր ուստեք կողմանց, առ որ դարձեալ խաղաղ եւ բարւոյ ժամանակի պէտք էին, թուի ինձ՝ թէ եւ վասն նախագրեալ ամբոխական դիպաց Խաչակրացն 'ի Պտղոմայիս, 'ի Թորոն եւ 'ի Յոպպէ), յերկարաձգեցան դարձեալ տարեկան մի եւս աւուրբք՝ նաւակատիքն, զէթ աշխարհահանդես մեծագոյն տօնախմբութիւնն. սակայն եւ 'ի նմին ամի (1198) թագեալ էր Լեւոն, զուցէ եւ կանխաւ եւս:

Յիշատակք պատմչաց եւ տարեգրաց՝ այլաձայնին յայս դէպս. եւ մեր զամենայն կշռելով՝ հաւանեալ ենք՝ եթէ ոչ մի անգամ՝ այլ երկիցս եւ երիցս հանդէս կատարեալ է Լեւոնի ընդունելութեան թագաւորական նշանաց<sup>72</sup>. նախ՝ որպէս հաւանօրէն երեւի՝ 'ի Յունաց ինքնակալէն Ալէքսէ Գ Անգելոսէ (յետ 1195 ամի). ապա յարեւմտեան կայսերէն: Անժխտելի հաւաստիք են այսմ, զի Ն. Լամբրունցի՝ որ վախճանեցան 'ի 14 ամսեան յուլիսի 1198 ամին, յիշէ զթագընկալութիւն Լեւոնի 'ի Տարսոն՝ 'ի նմին ամի, «ՈՒԲԷ. յորում ամի վերապատուեցաւ, ասէ, թագաւոր Հայոց Լեւոն որ յԲորփնեանց... (եւ ինքնակալք Հին եւ Նոր Հռոմայ) պսակեցին զսա քարամբք պատուականաւ՝ յեկեղեցի Տարսոնի, որ իմ անարժանութեամբս հովուի». իսկ զի ինքն Ներսէս 'ի մեծի աշխարհագումար հանդիսին ոչ եւս գտանէր ականատես, այլ յաջորդքն՝ (յերկուս այնուհետեւ բաժանեալ վիճակացն՝ Տարսոնի եւ Լամբրունի, որք եւ յանուանէ յիշին), յայտ ուրեմն

<sup>72</sup> Ոչ նորանշան կամ անօրինակ ինչ է այս, բազում անգամ թագ կապելն կամ ընդունել. քանզի ահա եւ նա՝ յորմէ զթագն ընդունել կամէր Լեւոն, կայսրն Փրետրիկ Ա, բազում անգամ այսպէս արար յիւր ինքեան գլուխ, երկիցս հանդիսի թագեալ 'ի Գերմանիա, երկիցս 'ի Հռովմ, երկիցս 'ի Պալիա: